«ՍՔՈՐ ԱՓ» ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄԻՋՈՑՈՎ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

1. Ընդհանուր տեղեկություններ

Սույն տեղեկատվական ամփոփագիրը ներկայացնում է «ՎԵԼՈՔՍ» ՎՄ ՍՊԸ- ին (այսուհետ՝ Ընկերություն) պատկանող հեռակառավարման համակարգի՝ «ՍՔՈՐ ԱՓ» հավելվածի (այսուհետ՝ «Հավելված») միջոցով որպես օգտատեր գրանցված հաճախորդին (այսուհետ՝ Օգտատեր) ֆինանսական խորհրդատվության ծառայությունների տրամադրման հիմնական պայմանները, սակագները, առանձնահատկությունները և կիրառելի սահմանափակումները:

2. Ծառայության հիմնական հնարավորությունները

ՀՀ քաղաքացի հանդիսացող ֆիզիկական անձինք, անցնելով Հավելվածում սահմանված քայլերի հաջորդականության նույնականացման գործընթաց, կարող են գրանցվել Հավելվածում, բացել օգտահաշիվ և օգտվել Ընկերության կողմից Հավելվածի միջոցով մատուցվող ֆինանսական խորհրդատվության ծառայությունից (այսուհետ՝ Ծառայություն), որը ներառում է՝

- վարկային պատմության և վարկային սքորի վերաբերյալ տվյալների թարմացում,
- վարկային պատմության և վարկային սքորի վերաբերյալ ստացված տեղեկատվության ներկայացում,
- վարկային սքորի փոփոխությունների ներկայացում,
- ֆինանսական վարքագծի, վարկային պատմության կառավարման վերաբերյալ խորհուրդների և օգտակար հոդվածների ներկայացում,
- հիշեցումների և ծանուցումների ստացում,
- վարկային հաշվիչ:

3. Ծառայությունների սակագներ և դրույքներ

Հավելվածի միջոցով Ծառայությունները մատուցվում են ինչպես առանց բաժանորդագրության, այնպես էլ բաժանորդագրությամբ տարբերակներով:

3.1. Առանց բաժանորդագրության Հավելվածի Ծառայություններից օգտվելու դեպքում հասանելի են հետևյալ հնարավորությունները՝

- վարկային պատմության և վարկային սքորի վերաբերյալ տվյալների թարմացում սեփական նախաձեռնությամբ, որի դեպքում կիրառվում է միջնորդավճար համաձայն 3.3 կետով սահմանված սակագների,
- վարկային պատմության և վարկային սքորի վերաբերյալ ստացված տեղեկատվության ներկայացում,
- վարկային սքորի փոփոխությունների ներկայացում,
- ֆինանսական վարքագծի, վարկային պատմության կառավարման վերաբերյալ խորհուրդների և օգտակար հղումների ներկայացում,
- հիշեցումների և ծանուցումների ստացում,
- վարկային հաշվիչ։

3.2. Տարեկան բաժանորդագրությամբ Հավելվածի Ծառայություններից օգտվելու դեպքում հասանելի են հետևյալ հնարավորությունները՝

- վարկային պատմության և վարկային սքորի վերաբերյալ տվյալների թարմացում՝
  - ամսական պարբերականությամբ, յուրաքանչյուր հաշվետու ամսվա մեջ մեկ անգամ,
  - սեփական նախաձեռնությամբ, որի դեպքում կիրառվում է միջնորդավճար համաձայն 3.3 կետով սահմանված սակագների,
- վարկային պատմության և վարկային սքորի վերաբերյալ ստացված տեղեկատվության ներկայացում,
- վարկային սքորի փոփոխությունների ներկայացում,
- ֆինանսական վարքագծի, վարկային պատմության կառավարման վերաբերյալ խորհուրդների և օգտակար հղումների ներկայացում,
- հիշեցումների և ծանուցումների ստացում,
- վարկային հաշվիչ։

Բաժանորդագրության շրջանակում օգտատիրոջը յուրաքանչյուր օրացուցային ամսվա համար տրամադրվում է մեկ տվյալների թարմացման հնարավորություն, որը կարող է օգտագործվել օգտատիրոջ նախընտրությամբ՝ մինչև տվյալ ամսվա վերջին օրացուցային օրը։ Եթե օգտատերը մինչև տվյալ ամսվա վերջին օրացուցային օրը չի օգտվում իրեն հասանելի թարմացումից, տվյալների թարմացումն իրականացվում է ավտոմատ կերպով ամսվա վերջին օրացուցային օրը՝ առանց օգտատիրոջ լրացուցիչ գործողության։

3.3. Հավելվածով Ծառայությունների մատուցման դիմաց գործում են հետևյալ սակագները և դրույքները՝

N	ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	ՍԱԿԱԳԻՆ
1.	Հավելվածի ակտիվացման վճար	0 ՀՀ դրամ
2.	Հավելվածի սպասարկման վճար	0 ՀՀ դրամ
3.	Հավելվածում մատուցվող ֆինանսական խորհրդատվության ծառայության միջնորդավճար	
3.1.	Առանց բաժանորդագրության	0 ՀՀ դրամ
3.2.	Տարեկան բաժանորդագրությամբ	7,900 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
		Մինչև 31/08/2026թ.-ը բաժանորդագրվելու դեպքում բաժանորդագրության առաջին տարվա վճարը սահմանվում է 3,990 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
4.	Օգտատիրոջ նախաձեռնությամբ վարկային պատմության և վարկային սքոր գնահատականի վերաբերյալ տեղեկատվության մեկանգամյա (ձեռքով) թարմացման վճար	1,900 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)

Ծառայությունների գործող սակագները հասանելի են՝

- Հավելվածում,
- Ընկերության պաշտոնական կայքում,
- համապատասխան սակագնային փաստաթղթերում:

Ընկերությունն իրավունք ունի փոփոխել սակագները՝ այդ մասին նախապես տեղեկացնելով օգտատերերին:

4. Տվյալների մասով Ընկերության պատասխանատվության շրջանակը

Ընկերությունը պատասխանատվություն չի կրում արտաքին աղբյուրներից ստացված օգտատիրոջ վարկային պատմության մեջ առկա տվյալների, վարկային սքոր գնահատականի և դրա հաշվարկման, դրանց մեջ հնարավոր ճշտությունների և դրանց արդիականության մասով, ինչպես նաև տվյալների ստացման հետ կապված խնդիրների առկայության մասով,

այդ թվում՝ եթե օգտատիրոջ կողմից կիրառվել է տվյալների ստացման սահմանափակում համաձայն ՀՀ օրենսդրության և այս ոլորտը կարգավորող այլ իրավական սահմանափակումների և հնարավորությունների:

5. Վճարումներ և ավտոմատ գանձումներ

Ծառայությունների դիմաց վճարումները իրականացվում են Հավելվածի համապատասխան վճարային էջում քարտային տվյալների մուտքագրման կամ Հավելվածում կցված քարտի միջոցով:

Բաժանորդագրության դեպքում՝

- վճարումները կարող են գանձվել ավտոմատ,
- բաժանորդագրությունը կարող է վերաթարմացվել ավտոմատ՝ մինչև օգտատիրոջ կողմից դրա դադարեցումը,
- ավտոմատ գանձումները կատարվում են համապատասխան հաշվարկային շրջանի սկզբում:

Վճարման ձախողման դեպքում՝

- բաժանորդագրությունը կարող է դադարեցվել կամ փոխվել առանց բաժանորդագրության տարբերակի,
- ավտոմատ թարմացումները կարող են կասեցվել,
- ծառայության որոշ հնարավորություններ կարող են սահմանափակվել:

Վերոնշյալ դեպքերում հաճախորդին ուղարկվում է համապատասխան ծանուցում:

6. Վճարային քարտի կցում և կառավարում

Ծառայություններից օգտվելու համար օգտատերը կարող է Հավելվածում կցել վճարային քարտ:

Կցված քարտը կարող է օգտագործվել՝

- բաժանորդագրության դիմաց վճարումների,
- մեկանգամյա (ձեռքով) թարմացումների,
- այլ վճարովի ծառայությունների դիմաց վճարումների համար:

Ակտիվ բաժանորդագրության դեպքում վերջին ակտիվ վճարային քարտի հեռացումը կարող է սահմանափակվել մինչև բաժանորդագրության դադարեցումը կամ նոր քարտի կցումը։

7. Բաժանորդագրության դադարեցում

Օգտատերը կարող է ցանկացած ժամանակ դադարեցնել բաժանորդագրությունը Հավելվածի համապատասխան բաժնի միջոցով։

Բաժանորդագրության դադարեցման դեպքում՝

- արդեն գանձված գումարները ենթակա չեն վերադարձման, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,
- բաժանորդագրությունը շարունակում է գործել մինչև վճարված ժամանակահատվածի ավարտը,
- տվյալների թարմացումը շարունակվում է մինչև բաժանորդագրության գործողության ավարտը՝ համաձայն տվյալ բաժանորդագրությամբ սահմանված տրամաբանության, բացառությամբ այն դեպքերի, երբ օգտահաշիվը փակվում է։

8. Տվյալների թարմացման առանձնահատկություններ և սահմանափակումներ

Ծառայության շրջանակում օգտագործվող որոշ տվյալները ստացվում են արտաքին աղբյուրներից և գործընկեր կազմակերպություններից։

Տվյալների թարմացման դեպքում հնարավոր են՝

- տվյալների տրամադրման ուշացումներ,
- ժամանակավոր անհասանելիություն,
- տվյալների թարմացման ժամկետների տարբերություններ, քանի որ տվյալների թարմացման հաճախականությունը կարող է կախված լինել երրորդ կողմ կազմակերպություններից ստացվող տեղեկատվությունից։

Ընկերությունը չի երաշխավորում՝

- վարկային սքորի փոփոխություն,
- վարկային առաջարկների ստացում,

- վարկավորման հաստատում,
- տվյալների ակնթարթային թարմացում։

Ծառայության շրջանակում տրամադրվող տեղեկատվությունը կրում է տեղեկատվական և խորհրդատվական բնույթ և չի հանդիսանում վարկավորման կամ ֆինանսական արդյունքի երաշխիք։

9. Ծանուցումներ

Հավելվածը կարող է օգտատիրոջը ուղարկել ծանուցումներ՝

- տվյալների թարմացման,
- բաժանորդագրության ակտիվացման կամ ավարտի,
- վճարման ձախողման,
- ծառայության փոփոխությունների,
- ծառայության մատուցման հետ կապված այլ գործողությունների վերաբերյալ։

10. Բողոքների և հարցերի ներկայացում

Ծառայությունների վերաբերյալ հարցերի, բողոքների կամ առաջարկությունների դեպքում օգտատերը կարող է կապ հաստատել Ընկերության հետ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով հետևյալ հասցեով՝ customer-care@velox.am ։

11. Եզրափակիչ դրույթներ

Սույն տեղեկատվական ամփոփագիրը տրամադրվում է ծառայությունների հիմնական պայմանների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու նպատակով և չի հանդիսանում պայմանագիր։

Ծառայությունների ամբողջական պայմանները սահմանվում են՝

- «Վելոքս ՎՄ» ՍՊԸ «ՍՔՈՐ ԱՓ» հավելվածի օգտագործման և դրա միջոցով վարկային սահմանաչափի և ֆինանսական խորհրդատվության տրամադրման հիմնական պայմաններ և դրույթներով,
- օգտատիրոջ կողմից տրամադրված համաձայնություններով և հաստատումներով,
- Ընկերության ներքին կանոններով և ընթացակարգերով։